ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հոկտեմբերի 2020 թվականի N 236Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 126-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

ո ր ո շ ու մ ե մ.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2020 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2020 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները հաստատելու մասին» N 126-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման N 1 հավելվածում կատարել լրացումներ՝ համաձայն N 1 հավելվածի,

2) որոշման N 2 և N 4 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 և N 3 հավելվածների:

2. Սյունիքի մարզպետարանի ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ ապահովել ընկերությունների կողմից վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների մատուցումը համաձայն հաստատված գնացուցակի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 06
ք. Կապան